ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/05» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/05-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի մայիսի 24-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Կապալառուի առաջարկությամբ Պայմանագրի շրջանակում 18.03.2024թ. կնքված N 1 համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի շրջանակում 18.03.2024թ. կնքված N 1 համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված աշխատանքների մասով՝ Պայմանագրի «ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Ավարտը» սյունակում նշված՝ աշխատանքների կատարման 70 օրացուցային օր ժամկետը երկարաձգվել է 10 աշխատանքային օրով:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.6 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 19.09.2023թ. N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/05-1» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«24» մայիսի 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ա. Վարդապետյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԹՈՐԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Թ. Սհոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 19.09.2023թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/05-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրի շրջանակում 18.03.2024թ. կնքված N 1 համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված աշխատանքների մասով՝ Պայմանագրի «ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ» վերտառությամբ Հավելված N 2-ում «Ավարտը» սյունակում նշված՝ աշխատանքների կատարման 70 օրացուցային օր ժամկետը երկարաձգել 10 աշխատանքային օրով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը և հավելված N 2-ը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	***«ԹՈՐԳ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լանջաղբյուր, Մաշտոցի փ. 6
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 08418358
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 220083336135000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ա. Վարդապետյան	Տնօրեն՝ Թ. Սհոյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Գ. Սարգս